Ադրբեջանական «Երրորդ հայացք» տեղեկատվական-վերլուծական գործակալության տնօրեն, քաղաքագետ Ռաուֆ Ռաջաբովը գրեթե բոլոր հայ-ադրբեջանական հավաքների՝ գիտաժողովների, կոնֆերանսների մշտական մասնակից է: Այս անգամ նա մասնակցում էր «Արմենիա Մարիոտ» հյուրանոցում տեղի ունեցող «Կովկաս - 2007» միջազգային կոնֆերանսին, որը հիմնականում նվիրված էր Հարավային Կովկասում հակամարտությունների լուծման հիմնախնդիրներին:

եկեք հանդիպենք ոչ թե Բրյուսելում, Փարիզում կամ Վաշինգտոնում, այլ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ, ԲԱՔՎՈՒՄ ԿԱՄ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Անշուշտ, Մինսկի խմբի բանակցությունների հարթակը պիտի պահպանվի, բայց ինչո՞ւ չստեղծել նորը, օրինակ՝ Բաքու-Երեւան: Ես դա կանվանեի ռեգիոնալ հարթակ, որը միջազգային իրավունքի երկու սուբյեկտների միջեւ կկարգավորեր խնդիրները:

Իհարկե, մեզ առաջին հերթին հետաքրքրում էին Ղարաբաղի հարցի վերաբերյալ Ադրբեջանի նոր մոտեցումները, եթե այդպիսիք կան: Հարեւան հանրապետության իշխանությունների տեսակետին մենք ծանոթ ենք, բայց ի՞նչ առաջարկներ ունեն Ադրբեջանի հասարակության այլ խավերի ներկայացուցիչները: Ադրբեջանցի վերլուծաբանը գտնում է, որ տվյալ պահին ճիշտ կլինի Լեռնային Ղարաբաղին տալ ազատ տնտեսական գոտու կարգավիճակ: Բայց որոնք են դրա առանձնահատկությունները:

- Եթե մենք խոսում ենք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին՝ մինչ ռեֆերենդում անցկացնելը, անկասկած, պետք է լինի հայերի ու ադրբեջանցիների՝ Ղարաբաղում համատեղ ապրելու որոշակի փուլ: Անշուշտ, պետք է դուրս բերվեն զորքերը, տեղի ունենա այդ շրջանի ապառազմականացում, որ արդեն հնարավոր լինի ԼՂ-ին տալ ազատ տնտեսական գոտու կարգավիճակ: Այն ենթադրում է ինտեգրացիա ինչպես ազգային, տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մասշտաբներով: Այսինքն՝ այս գոտին կարող է գալ ցանկացած ներդնող, քաղաքացի, երկիր, ընկերություն, այդ թվում՝ եւ ադրբեջանական, եւ հայկական: Ես առաջարկում եմ այս հիմքի վրա սկսել Հայաստանի ու Ադրբեջանի ինտեգրացիան: Հենց մեր պետությունները պետք է ստանձնեն Լեռնային Ղարաբաղի հայերի եւ ադրբեջանցիների անվտանգության երաշխիքները:

- Իսկ Ադրբեջանի ղեկավարությունն արձագանքե՞ց Ձեր այդ առաջարկությանը:

- Այդ առաջարկին արձագանքեց Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը, որը համեմատեց այդ մոդելը Թաթարստանի օրինակով: Այն կարելի է անվանել պետություն՝ պետության մեջ: Միայն թե Թաթարստանը չունի զինված ուժեր եւ չի վարում պաշտպանական քաղաքականություն: Բայց իրականացնում է արտաքին տնտեսական քաղաքականություն: Այսինքն, իմ կարծիքով, տնտեսությունը կարող է նոր զարկ տալ ղարաբաղյան եռանկյունու լուծմանը: Այդ իսկ պատճառով էլ գտնում եմ, որ չօգտագործել այդ մոդելը՝ պրագմատիկ չէ: Բայց մինչ այդ այստեղ պետք է կատարվեն բոլոր անհրաժեշտ քայլերը՝ զորքերի ամբողջովին դուրս բերում, փախստականների վերադարձ: Այնուամենայնիվ, ես Ղարաբաղում հանրաքվեի անցկացման կողմնակից եմ: Իմ կարծիքով, դա պետք է արվի հանուն օբյեկտիվության: Բայց դրան պետք է նախորդի համատեղ ապրելը: Մասնավորապես, այնտեղ պետք է վերադառնան նախկինում ապրած մոտ 50 հազար ադրբեջանցիներ: Բայց ազատ տնտեսական գոտու կարգավիճակը պետք է գործի հենց սկզբից:

Ի դեպ, մի քանի տարի առաջ Ադրբեջանը տարբեր մակարդակներով հայտարարեց Ղարաբաղի տնտեսությունում 20 մլրդ. դոլար գումարից ավելի ներդրումներ իրականացնելու պատրաստակամության մասին: Մեր նախագահ Իլհամ Ալիեւը հրամանագիր ստորագրեց Ադրբեջանում մի քանի տնտեսական գոտիների ստեղծման վերաբերյալ: Այսինքն, այդ գաղափարն արդեն կա, եւ այն մշակելու համար ժամանակ չի պահանջվի, այնպես որ, նույնը կարելի է իրականացնել Ղարաբաղում: Ճիշտ է, դա պահանջում է մանրակրկիտ ամենօրյա աշխատանք, բայց այն պետք է արվի երկուսի՝ Ադրբեջանի եւ Հայաստանի կողմից, որոնք էլ կարող են դառնալ Ղարաբաղի ժողովրդի երաշխավորները:

- Իսկ Հայաստանի եւ Ադրբեջանի տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը հնարավո՞ր է մինչ Ղարաբաղի հարցի լուծումը:

- Եթե մենք խոսենք ռեալ, ապա՝ մինչեւ վերը նշված քայլերը չձեռնարկվեն, դա հնարավոր չէ: Իսկ դրա համար կան պատճառներ, որոնք բազմիցս թվարկել է Ադրբեջանի ղեկավարությունը: Ես չեմ ուզում դրանք նորից հնչեցնել: Իսկ ազատ գոտու ստեղծումը կարող է բերել տարածաշրջանային ինտեգրացիայի եւ տարածաշրջանային նախագծերի մշակման, քանի որ այն չի կարող լինել զուտ ազգային:

- Հունիսի 7-ին Իլհամ Ալիեւը եւ Սերժ Սարգսյանն առաջին անգամ կհանդիպեն: Դուք ի՞նչ նշանակություն եք տալիս դրան:

- Անշուշտ, այդ հանդիպումը պիտի տեղի ունենար: Հայաստանում կա նոր նախագահ, իսկ Իլհամ Ալիեւը, ունենալով մեծ վարկանիշ իր երկրում, անկասկած, նորից կվերընտրվի հոկտեմբերյան ընտրություններում: Այնպես որ, հայկական կողմը պիտի հասկանա, որ Իլհամ Ալիեւը եւս չորս տարի կլինի նախագահ, եւ բանակցությունների ձեւաչափն այդ ժամանակահատվածում չի փոխվի: Ի դեպ, այս տարի Բաքվում պետք է անցկացվի նաեւ «Մետաքսե ճանապարհ» նախագծի հոբելյանական գագաթնաժողովը, որտեղ կհրավիրվեն այս ծրագրի բոլոր երկրների ղեկավարները, այդ թվում՝ նաեւ Հայաստանը: Այնպես որ, եթե Հայաստանի որեւէ բարձրաստիճան ղեկավար այցելի Ադրբեջան, դա լավ առիթ կլինի՝ արդեն Բաքվում շարունակելու Պրահայի գործընթացը: Գուցե հետագայում այն շարունակվի նաեւ Երեւանում՝ Ադրբեջանի պաշտոնյայի մասնակցությամբ:

- Դուք ասացիք, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար Մինսկի խմբի ձեւաչափը պետք է պահպանվի, բայց Հայաստանում այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ Ադրբեջանը կողմնակից է այլ շրջանակներ տեղափոխել բանակցությունները: Բոլորիս հիշողության մեջ դեռ թարմ է Ադրբեջանի նախաձեռնությունը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում, ինչն առիթ տվեց մտածելու, որ պաշտոնական Բաքուն մտադիր է գործընթացը տեղափոխել ՄԱԿ: Կարելի՞ է ասել, որ ներկայումս Ադրբեջանը չի ցանկանում բանակցությունները շարունակել պրահյան պայմանավորվածության հիմքի վրա:

- Ադրբեջանը կշարունակի իր ճանապարհը պրահյան գործընթացում, բայց մեր երկիրն արդարացիորեն ընդգծեց իր դիրքորոշումը Մինսկի խմբի մասնակից երեք երկրների քվեարկության վերաբերյալ: ԱՄՆ-ն, Ֆրանսիան եւ Ռուսաստանը, լինելով միջնորդական առաքելության մասնակիցներ, ըստ էության, պիտի ձեռնպահ մնային քվեարկությունից, լինեին ոչ կողմ, ոչ էլ դեմ այդ բանաձեւին: Միջնորդները չպիտի ցույց տան իրենց նախապատվություններն այս հակամարտությունում: Այն, ինչ արեցին այդ երեք համանախագահ երկրները քվեարկության ժամանակ, ինչ-որ տեղ արժեզրկեց վստահությունն իրենց նկատմամբ՝ եւ, իմ կարծիքով, ոչ միայն Ադրբեջանում, այլեւ՝ Հայաստանում: Օրինակ, ինձ չի թվում, որ Հայաստանը լիովին ընդունում է այն 9 բազային սկզբունքները, որոնք կան պրահյան պայմանավորվածություններում: Ընդհանրապես, դրանք բազային կարելի է կոչել, եթե նրանք երկու կողմերն էլ ընդունեն, բայց այդպես չէ: Կոնկրետ երեք սկզբունքներ ընդունված չեն: Այդ իսկ պատճառով ես չեմ կարծում, որ Ադրբեջանի դիքորոշումը տվյալ հարցի վերաբերյալ վատ է: Իմ կարծիքով, այն արտահայտությունները, որոնք հնչեցին հետագայում այս հարցի կապակցությամբ որոշ համանախագահողների կողմից, սխալ էին: Նրանք նեղացել էին Ադրբեջանի ներկայացուցիչների վերաբերմունքից:

- Բայց չէ՞ որ բանաձեւում տեղ գտած արտահայտությունը՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին, կանխորոշում է բանակցությունների ելքը:

- Այդ բանաձեւում ոչ մի նոր բան չկար: Նորություն կարելի էր անվանել միայն այն, որ Ադրբեջանը բանավեճ ծավալեց ՄԱԿ-ի շրջանակներում: Սա նույնպես լավ փաստարկ է, որ մենք քննարկում ենք հարցը ոչ թե մարտի դաշտում, այլ հեղինակավոր միջազգային կառույցի հարթակում: Տվյալ դեպքում այս ամենն ուղերձ է, որ Ադրբեջանն ու Հայաստանը պետք է գնան ուղիղ բանակցությունների: Տվյալ իրավիճակը ցույց տվեց, որ ադրբեջանա-հայկական ուղիղ բանակցությունների ձեւաչափն անխուսափելի է: Առանց դրա մենք ստիպված կլինենք ունենալ կախվածություն այս կամ այլ քմահաճույքից, հետաքրքրությունից:

- Իսկ ուղիղ բանակցություններում Դուք նախատեսո՞ւմ եք Ղարաբաղի մասնակցությունը:

- Ղարաբաղի ներկայացուցիչն արդեն մասնակցում է Հայաստանի պատվիրակությունում: Այնուամենայնիվ, ես չեմ մերժում այդ գաղափարը եւ գտնում եմ, որ, անշուշտ, Բաքուն պիտի վարի ուղիղ երկխոսություն Ստեփանակերտի հետ: Իրականությունն այն է, որ Ղարաբաղի հայկական բնակչությունն ունի ձեւավորված հաստատություններ եւ որոշակի վերնախավ: Ես չեմ ասում այն մասին, որ եթե Ղարաբաղի հայկական բնակչությունը երկար տարիներ ապրելով այնտեղ, ձեւավորել է ազգային վերնախավ, ապա Ղարաբաղի ադրբեջանական բնակչությունը սփռված է մեր հանրապետության տարբեր քաղաքներում եւ շրջաններում ու չի ապրում կոմպակտ: Իսկ ԼՂ-ի հայկական բնակչությունը կոմպակտ է: Այդ իսկ պատճառով, անշուշտ, Բաքուն պիտի վարի նրա հետ երկխոսություն: Իմ ջիայլոց, այդպիսի փորձ կատարվեց , երբ Հայաստանի եւ Ադրբեջանի նախկին մշակույթի նախարարները եւ ՌԴ-ում ներկայիս ՀՀ եւ ԱՀ դեսպաններն այցելեցին Ստեփանակերտ: Լավ կլիներ, եթե այդ փորձը ոչ թե շարունակվեր, այլ լրացվեր այն մասնագետներով, որոնք կարող են լինել բանակցողներ, վարել երկխոսություն եւ բանավիճել, որոնք գիտեն հակամարտության էությունը: Ինձ թվում է, որ այն կարելի է վերսկսել հոկտեմբերից, ընտրություններից հետո: Ընդհանրապես, իմ կարծիքով, շատ պոզիտիվ կլիներ, եթե Հայաստանն ու Ադրբեջանը մշակեին միասնական ռազմավարություն՝ «ղարաբաղյան եռանկյունին» լուծելու համար, եւ այդ ռազմավարության վրա աշխատեին ադրբեջանական եւ հայկական փորձագետները՝ քաղաքագետները, վերլուծաբանները, պաշտոնյաները: Այդ նպատակով կարելի է ստեղծել աշխատանքային խումբ կամ հանձնաժողով, որի մեջ կլինեն նաեւ տարբեր սեկցիաներ: Այդ դեպքում խնդրի լուծման ուղղությամբ կոնկրետ աշխատանք կսկսվի: Չէ՞ որ այսօր համանախագահները ասում են՝ դուք պայմանավորվեք, իսկ մենք կհաստատենք: Բայց պարոնայք, եթե մենք պայմանավորվենք, ինչի՞ է պետք ձեր հաստելը: Ինչ է, մենք միջազգային իրավունքի միավոր չե՞նք: Ինչ է, մենք կորցրե՞լ ենք անկախ երկրներ մեր կարգավիճակը: Ինչ է, մենք ՄԱԿ-ի, Եւրախորհրդի կամ ԵԱՀԿ-ի անդամներ չե՞նք: Իսկ ինչ է ԵԱՀԿ-ն: Դա միջազգային կազմակերպություն է: Ինչո՞ւ սպասել, որ մենք մի բան կանենք, իսկ նրանք դա կհաստատեն: Ինձ թվում է, որ մենք հասունացել ենք այդ շրջանից: Լավ է, որ Ադրբեջանում եւ Հայաստանում արդեն հասկանում են իրենց տեղը, դերը եւ առաքելությունը: Համատեղ հանձնաժողով ստեղծելով՝ մենք արդեն էլ չենք մեկնի Բրյուսել, Փարիզ կամ Վաշինգտոն, այլ կհանդիպենք Երեւանում, Բաքվում կամ Ստեփանակերտում: Իսկ ժողովուրդն արդեն պատրաստ կլինի սպասել այդ աշխատանքի արդյունքներին՝ լինի դա մեկ-երկու թե հինգ տարի: Այն ժամանակ արդեն կսկսի փոխվել եւ վստահության աստիճանը: Արդեն մեզ չեն ասի՝ դուք արեք, իսկ մենք կհաստատենք: Սա արդեն այլ իրավիճակ կլինի:

Տիգրան ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ